



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԱԿՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**Միացեալ Նահանգներու Արեւմտեան եւ Արեւելեան Թեմերուն եւ  
Քանադայի Թեմին Հոգեւորականաց Համագումար**  
12-14 Փետրուար 2007

Նկատի ունենալով, որ Ս. Ղեւոնդեանց Տօնը է նաեւ քահանայից տօն, աւանդութիւն դարձած է, որ այս տօնի օրերուն մեր թեմերուն մէջ կազմակերպուի հոգեւորականաց համագումար: Հիւսիսային Ամերիկայի մեր երեք թեմերը նաեւ ստեղծած են բարի աւանդութիւն մը, ըստ որուն, ամէն երկու տարին անգամ մը համագումարը տեղի կ'ունենայ երեք թեմերէն մէկուն հիւրընկալութեամբ, միատեղ խմբելով երեք թեմերու Առաջնորդներն ու հոգեւորականաց դասերը:

Այս տարի, Ս. Ղեւոնդեանց Տօնին առիթով, Միացեալ Նահանգներու Արեւմտեան եւ Արեւելեան երկու Թեմերուն եւ Քանադայի Թեմին մէջ ծառայող հոգեւորականներու համագումարը տեղի ունեցաւ Երկուշաբթիէն Չորեքշաբթի, 12-14 Փետրուարին, Օրէնճ Քաունթիի Ս. Զառասկից Մանկանց Եկեղեցւոյ համալիրին մէջ, հիւրընկալութեամբ Արեւմտեան Թեմին, հովանաւորութեամբ եւ առաջնորդութեամբ երեք թեմակալ Առաջնորդներուն՝ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի (Արեւմտեան Թեմ), Բարձր. Տ. Օշական Արք. Չօլոյեանի (Արեւելեան Թեմ), Բարձր. Տ. Խաժակ Արք. Յակոբեանի (Քանադայի Թեմ): Երեք օրերու վրայ տարածուած համագումարը քննարկեց այն մարտահրաւերները, զորս կը դիմագրաւեն հայ եկեղեցին եւ հայ հոգեւորականը 21-րդ դարուն, Արեւմտեան այս երկիրներուն մէջ:

Ժողովին բացումը կատարուեցաւ 12 Փետրուարի կէսօրէ ետք ժամը 2:00-ին, հաւաքական աղօթքով: Ընթերցուեցաւ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի օրհնութեան գիրը եւ այս առիթով համագումարին Վեհափառ Հօր ուղղած պատգամը: Բարի գալստեան խօսք արտասանեցին հիւրընկալ եկեղեցւոյ հոգեւոր հովիւը եւ հոգաբարձութեան ներկայացուցիչը: Ապա հիւրընկալ Թեմիս Առաջնորդ Սրբազանը ողջունեց երկու Թեմերու Առաջնորդները եւ այնտեղ ծառայող Սրբազան ու միաբան հայրերը եւ համագումարին մասնակցող քահանայ հայրերը, յիշեցնելով անոնց Առաքեալին թելադրութիւնը՝ զրահաւորուելու Ս. Հոգւոյ սպառնազինութեամբ եւ նախանձախնդրութեամբ իրենց ծառայութիւնը կատարելու: Ողջոյնի խօսքով հանդէս եկան նաեւ Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Օշական Արք. Չօլոյեան եւ Քանադայի Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Խաժակ Արք. Յակոբեան, որոնք, իրենց կարգին, քաջալերեցին ներկայ հոգեւորականները նախանձախնդրութեամբ եւ բժախնդրութեամբ իրենց պարտականութիւնները կատարելու:

Ժողովը իր աշխատանքներուն սկսաւ դիւանի ընտրութեամբ. Ատենապետ ընտրուեցաւ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, իսկ Ատենադպիր Արժ. Տ. Նարեկ Բիւյ. Թրթռեան:

Ժողովը ընդհանուր բնաբան ընտրած էր «Յոգեւորականին նախանձախնդրութիւնը». 3 օրերու վրայ երկարող նիստերուն ընթացքին, մասնակիցները ունկնդրեցին Առաջնորդ Սրբազան Հայրերուն թելադրանքները այս բնաբանէն բխող հարցերու շուրջ: Ներկայացուեցաւ դասախօսութիւն մը «Յոգեւորականի նախանձախնդրութեան ոգին իր ծառայական կեանքին մէջ» նիւթով, զոր ներկայացուց Յոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան: Հայր Սուրբը իր դասախօսութեան մէջ անդրադարձաւ հոգեւորականին ունենալիք նախանձախնդրութեան՝ նախ Աստուծոյ տան, մարդոց փրկութեան եւ ծիսական կատարման նկատմամբ, իր անձին ու ընտանիքին նկատմամբ, ինչպէս նաեւ՝ ազգային սրբութիւններու, աւանդութեանց, հայ լեզուին ու մշակոյթին եւ հայրենիքին նկատմամբ: Չեկոյց-ներկայացում մը՝ «Եկեղեցիներէ եւ համայնքներէ ներս կիրարկուած զանազան ծրագիրներու եւ ձեռնարկներու» մասին ներկայացուց՝ Արժն. Տ. Ներսէս Բիւյ. Մանուկեան, ցուցատախտակներով ներկայացնելով Արեւելեան Թեմի եկեղեցիներէն ներս տարուող աշխատանքներու ընդհանուր պատկերը: Իսկ Երեքշաբթի եւ Չորեքշաբթի առաոտեան ժամերգութիւններէն ետք, Արժ. Տ. Հրայր Ա. Բիւյ. Նիկոլեան, եւ Արժ. Տ. Անդրանիկ Ա. Բիւյ. Պալճեան, հոգեւոր խորհրդածութեան պահեր առաջնորդելով յաջորդաբար՝ Ա. Պետրոսի 1.3-9 եւ Բ. Տիմոթէոսի 4.1-5 համարներուն շուրջ:

Ժողովի ընթացքին քննարկուեցան ծիսական, արարողական, խորհուրդներու կիրարկման վերաբերեալ, ինչպէս նաեւ հովուական, հոգեւոր, քրիստոնէական դաստիարակութեան վերաբերող հարցեր, մշակուեցան միացեալ հրատարակչական եւ այլ ծրագիրներ: Խօսուեցաւ նաեւ արդիւնքին ու նիւթերուն մասին այն զրոյց-հանդիպումին, զոր Նորին Սրբութիւն՝ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը անցեալ Դեկտեմբեր 1-3 ունեցաւ երիտասարդութեան հետ, «Քու եկեղեցիդ՝ Ապագադ, Մասնակցե՛» բնաբանով, ապա նաեւ 2007ը «Հայ Լեզուի Տարի» հռչակելու Վեհափառ Հայրապետի կոնդակին մասին:

Ժողովական օրակարգերէն դուրս, հոգեւոր հայրերը նաեւ առիթ ունեցան իրենց հոգեւոր կեանքը հարստացնելու Ս. Պատարագով, առաւօտեան ու երեկոյեան ժամերգութիւններով:

Երկուշաբթի երեկոյեան, Ս. Դեռնոյեանց տօնին առթիւ մատուցուեցաւ Ս. եւ անմահ պատարագ, Օրէնճ Բաւնթիի Ս. Բառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ: Ս. Պատարագը մատուցեց Արեւելեան Թեմի Առաջնորդական Փոխանորդ Գերշ. Տ. Անուշաւան Եպս. Դանիէլեան: Սրբազանը իր քարոզին բնաբան ընտրած էր «Յոգին առաւել է քան զմարմին» Յիսուսի խօսքը, որուն ընդմէջէն Սրբազանը վեր առաւ Ս. Դեռնոյեանց եւ Վարդանանց ոգին, կոչ ուղղելով ներկաներուն հաւատքով ու աննկուն կամքով գօտեակոյտելու:

Ս. Պատարագին ներկայ եղան նաեւ հիւր հոգեւորականներ, որոնց շարքին՝ Դըպտի Ուղղափառ եկեղեցւոյ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Առաջնորդի ներկայացուցիչ Հայր Եուհաննա Իպրահիմ, Կաթողիկէ եկեղեցւոյ Առաջնորդի փոխանորդ եւ միջ-եկեղեցական յարաբերութեանց յանձնախումբի վարիչ Հայր Ճոն Սոնեսթերա եւ քարտուղար Տիկին Իրմա Բոնթերաս:

Յաւարտ Ս. Պատարագին, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն Միացեալ Նահանգներու Արեւելեան եւ Արեւմտեան Թեմերուն եւ Բանատայի Թեմին

մէջ ծառայած ու վախճանած բոլոր եկեղեցականներու հոգիներուն համար: Ապա տեղի ունեցաւ սիրոյ ճաշ՝ գաղութիս հաւատացեալներուն հետ միատեղ:

Երեքշաբթի երեկոյեան, Կլենտէլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Տեառնընդառաջի նախատօնակ, Անդաստան եւ մանուկներու ընծայում, նախագահութեամբ Թեմակալ երեք Առաջնորդ Սրբազան Հայրերուն եւ մասնակցութեամբ ժողովական հոգեւորականներուն: Օրուան պատգամաբերն էր Քանատայի Թեմի Առաջնորդ Սրբազան Հայրը, որ կոչ ուղղեց ծնողներուն իրենց զաւակները Աստուծոյ ընծայելու, հաւատքով դաստիարակելու եւ ազգային շունչով մեծցնելու:

Արարողութեան աւարտին, եկեղեցւոյ շրջափակին մէջ տեղի ունեցաւ աւանդական խարոյկավառութիւն, որուն ներկայ էին Առաջնորդ Սրբազանները, հոգեւոր հայրերը, եւ ներկայութեամբ Ազգային Վարչութեան անդամները, Զ.Ս.Ը.Ս.ի սկաուտական կազմերու խմբապետներն ու սկաուտ-արեւոյշներ, ինչպէս նաեւ հոծ բազմութիւն մը: Այնուհետեւ, սկաուտները եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ սեղանակից եղան հոգեւորականաց դասուն, հիւրընկալութեամբ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ Տիկնանց Միութեան:

Չորեքշաբթի, Փետրուար 14-ի առաւօտուն, ժողովական հոգեւոր հայրերը այցելեցին Ազգային Առաջնորդարանի նոր շէնքը, Լա Քրետենթա: Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն Մատրան մէջ տեղի ունեցաւ Արեւագալի ժամերգութիւն եւ խորհրդածութիւն: Ապա, հոգեւորականաց դասը այցելեց Ազգ. Վահան եւ Անուշ Շամլեան ազգային վարժարանը, ուր ներկայ եղաւ Ս. Վարդանանց տօնին առիթով կազմակերպուած աշակերտական հանդէսին: Խնամուած ներկայացումը աշակերտներուն կողմէ, անոնց ապրումով կատարած ասմունքներն ու երգերը մեծ խանդավառութիւն ստեղծեցին ժողովական հոգեւորականներուն մօտ, որոնք ծափողոյշներով եւ գնահատականներով շնորհաւորեցին ուսուցիչները եւ աշակերտները: Գնահատանքի խօսք առաւ Առաջնորդ Սրբազան Հայրը եւ այս առիթով յուշանուէր մը յանձնեց տնօրէնութեան: Ապա բոլոր հոգեւորականները ճաշեցին տնօրէնութեան, ուսուցչական կազմին եւ ուսանողութեան հետ:

Յայտնենք նաեւ, որ Օրէնճ Քաունթիի Արի Կիրակոս Միկասեան ազգային վարժարանի աշակերտները Երեքշաբթի օր ներկայ եղած էին Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ եկեղեցական արարողութեան ու ապա, եկեղեցւոյ շրջափակին մէջ լուսանկարուած էին հոգեւոր հայրերուն հետ:

Եռօրեայ համագումարը վերջ գտաւ Չորեքշաբթի, 14 Փետրուարի կէսօրին: Համագումարը առիթ եղաւ վերանորոգելու հոգեւորականներու յանձնառութիւնը եւ ժողովուրդին ծառայելու իրենց կամքը:

ԴԻԲԱՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՅ ՄԻԱՑԵԱԼ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

## CLERGY CONFERENCE OF THE PRELACIES OF NORTH AMERICA AND CANADA

February 12-14, 2007

Each year on the occasion of the Feast of St. Ghevont, which is also a celebration of clergy, it has become a tradition for our Prelacies to organize a clergy

conference. Moreover, every two years the three Prelacies of North America and Canada come together to hold a joint clergy conference with the participation of the Prelates and clergy members of the three Prelacies. This year, the Western Prelacy hosted the three-day joint clergy conference from February 12-14, 2007, under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern U.S.A., and H.E. Archbishop Khajag Hagopian, Prelate of Canada. The main topic of discussion was challenges facing the Armenian Church and Clergy in the Western world in the 21<sup>st</sup> century.

The conference, with the theme "The Zeal of Clergy", convened on the afternoon of Monday, February 12th, at the "Ghazarian" Hall adjacent to Forty Martyrs Church in Orange County, with the reading of the letter of blessing of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia and His message to the participants on this occasion. Following welcoming remarks by the host parish pastor and board of trustees representative, the three Prelates offered their remarks and encouragement to the participants.

The meeting began with Very Rev. Fr. Muron Aznikian being elected as Chair of the divan and Rev. Nareg Terterian as Secretary. Over the three day period, pastoral and spiritual concerns were discussed, as well as issues relating to Christian Education. Among the items on the agenda also was the discussion of topics raised at the Youth Gathering with Aram Vehapar which took place from December 1-3, 2006, and also the declaration of 2007 by His Holiness as the "Year of the Armenian Language". Alongside meetings, morning and evening church services were also offered during the conference.

On Monday evening, the eve of the Feast of St. Ghevont, Holy Mass was conducted at Forty Martyrs Church by H.G. Bishop Anoushavan Tanielian, who also delivered the sermon. Following Mass, requiem service was offered for the souls of departed clergy from the three Prelacies. Among those in attendance were guest clergy members Father Johanna Ibrahim of the Coptic Orthodox Church, and Father John Monestera and Secretary Mrs. Irma Contrera of the Catholic Church.

On the morning of Tuesday, February 13th, students from A.G. Minassian School attended morning church services and later had the opportunity to be photographed with the clergy members. In the evening, the eve of the Presentation of the Lord to the Temple was celebrated with Holy Mass at St. Mary's Church in Glendale, where Archbishop Khajag Hagopian delivered the sermon. Homenetmen scouts also participated in the service. Following church services, the parish Board of Trustees and Ladies Auxiliary had organized a reception at the "Armenak Der Bedrossian" Hall.

On the morning of Wednesday, February 14th, clergy members visited the new Prelacy Building where morning services took place at the Sts. Dertad and Ashkhen Chapel, followed by a visit to V. & A. Chamlian School where the students had organized an assembly in honor of Vartanants. The Prelate commended the students and administration, and presented the principal with a memento.

The conference, which offered the participants the chance to renew their spiritual responsibilities and their will to serve our faithful, concluded on the afternoon of Wednesday, February 14<sup>th</sup>.